# ԳԻՏԱԿԱՆ

## Լ. ԽԱՆ-ԱՂԵԱՆՑԻ

## ԱՐՏՕՆՈՒԱԾ ԱՒՏՕ-ԷԼԵՎԱՏՕՐԸ

**ԲԱԶՄԱՎԷՊԻ** յարգելի ընթերցողների ուշադրութիւնն ենք հրաւիրում մերազնեայ Լօռեցի Գ. Լեւոն Խան-Աղեանցի հնարած մի նոր մեքենայի վրայ, որը կրում է **գրաբալխական աւտօ-էլեվատօր** անունը և ջրվէժից կամ սովորական վեց վերշօկ բարձրութիւնից իջնող ջրից զանազան քանակութիւնով ջուր է բարձրացնում մինչև քառասուն մետր*: Նա բանում է ինքնաբերաբար առանց շոգու, քամու, ձիու կամ որ և է ուրիշ ուժի և ոչ մի ծախս չէ պահանջում: Ջուր բարձրացնող մեքենաների այս կատարելագործուած տեսակը շատ մեծ և կարեւոր նշանակութիւն կ'ունենայ ընդհանրապէս և ի մասնաւորի մեր երկրի համար, ուր շատ արգաւանդ հողեր և սքանչելի վայրեր անմշակ ու խոպան են մնում լոկ այն պատճառով, որ առուներով կամ ուրիշ միջոցներով ոռոգելու հնարաւորութիւն չկայ: Մեզ քաջ յայտնի են Արաքս գետի հովտում շատ գեղասքանչ վայրեր, ուր ջուրը հոսում է ցածում, բայց որովհետև մինչև օրս հնարաւոր չէ եղած բարձրացնել նրան, դաշտը անմշակ է մնացել: Մեծամօր (Սեւ ջուր) գետի ափին, ս. Էջմիածնի գաւառում, մի ահագին տարածութեամբ հող կայ, որը ի մեծ ցաւ և զըրկանք տեղացի բնակիչների չէ մշակւում, այն ինչ մէկ կամ երկու մետր ցածից հոսում է ջուրը, որին դաշտը բարձրացնելու համար գիւղացիների կողմից գործ դրած ամէն տեսակ անդուլ ջանք ու աշխատանք ապարդիւն է մնացել: Այդպիսի օրինակներ շատերին յայտնի կը լինի, այդ տեսակ հողեր ինչպէս ուրիշ երկրներում գտնւում են և մեր աշխարհում, որոնք շնորհիւ հայազգի գիտնականի հնարած մեքենայի կարող են փարթամ բուսականութեամբ ճոխանալ, անպէտք հողի գինը



Լ. Խան-աղեանցի գործիքի աշխատելը:

կը բարձրանայ, բրնձի, բամբակի և քունջութի ցանքերով կը զարդարուին այն տեղերը, որոնց ամայի և անմարդաբնակ լինելը դիտողի վրայ ծանր և մելամաղձոտ տպաւորութիւն է թողնում, իսկ ծառաստանները և այգիները ոչ միայն տեղական ժողովրդի համար արդիւնքի մի նոր առատ աղբիւր կը լինին, այլ և օդը կը մեղմացնեն և եղանակները կը քաղցրացնեն:

Գ. Խան-Աղեանցի հնարած մեքենան, որի գիւտը մի նոր փառաւոր ապացոյց է հայի ամէն ասպարիզում ունեցած յառաջադիմութեան, մինչև այժմ գոյութիւն ունեցող նոյն նպատակին ծառայող մեքենաներից ամենալաւն է իր բոլոր յատկութիւններով և արդէն գրաւել է համակրողների մի ստուար բազմութիւն Ռուսիայի քաղաքներում և գիւղերում, ուր դեռ իր մանուկ հասակում այդ մեքենան ընդարձակ գործածութեան մէջ է մըտնում: Նա շատ պարզ կազմութիւն և ամուր կերտուածք ունի, հիանալի կերպով բանում է, իսկ գինը երկու երեք անգամ աժան է, քան մինչև օրս եղածները:

Խան-Աղեանցի հնարած մեքենան ունի թուահամարներ (N°. I - N°. 10), որոնք արտադրած ջրի քանակութիւնն են ցոյց տալիս: Ամենից քիչ ջուր

---

* Հարկաւոր ենք համարում այստեղ յիշել, որ Լ. Խան-Աղեանցը ութսունական թուականներում մի ուրիշ գիւտ եւս արել է, այն է ձիթահան մեքենայի մամուլի տակից ուղղակի մաքուր ձէթ է պատրաստում իր հնարած այսպէս կոչուած՝ **ռեզմէկ անօրների** միջոցով, այն ինչ սովորաբար սեղմիչ մամուլների տակից ստացած ձէթը կարիք է լինում անպատճառ մաքրել քիմիական կամ մեքենայական միջոցով:

digitised by A.R.A.R.@

տուողը N°. I ապարատն (appareil) է, որի ջուր արտադրող խողովակի տրամագիծը մէկ և կէս սանտիմետր է, արժէ միայն քառասուն և հինգ ֆրանկ և օր ու գիշեր 2500 լիտր (litres) ջուր է տեղ հասցնում. այն ինչ N°. 10րդ ապարատը արժէ 2160 ֆրանկ և օր ու գիշեր կէս միլիօն լիտր ջուր է դուրս տալի:

Ինչպէս յիշեցինք Խան-Աղեանցի աւտո-էլեվատորը պարզ կազմութիւն ունի և հետեւեալ կերպով է բանում: Ջրի մէջ դրուած Ա խողովակի ներքին ծայրը պէտք է ջրի մակերևութից գոնէ վեց կամ ութ վերշօկ ցած լինի. որքան շատ լինի ցածութիւնը, այնքան աւելի կը՝ լինի ստացուած ջրի քանակութիւնը: Ջուրը՝ Ա խողովակով արագ հոսելով, մտնում է ձուլածոյ (le fer du fonte) քառակուսի Բ անօթի մէջ և մասամբ թափւում է խողովակի դիմացը գտնուած ծակից. որին ջրի հոսանքի ոյժը փակում է Գ խցանով. որի փակուելով՝ ջուրը ուժգին հակառակ հարուած է ստանում, որով և բաց է անում անօթի միւս




Ամբողջ գործիքը:

երկու հակառակ պատերում ԴԴ ռետինեայ անցքերը և մտնում է ճնշող ԵԵ անօթների մէջ, որոնք գտնում են Բ անօթի երկու կողմերում և միմեանց հետ միացած են Զ անցքով: ԵԵ անօթների վերին մասում գտնուած խտացած օդի ճնշումով ջուրը դուրս է գնում խողովակով դէպ ի նշանակուած տեղը:

Լ. Ք.

Յիշենք նաև տեղական թերթերում Գ. Լ. Խան-Աղեանցի գործիքին մասին տուած տեղեկութիւններն: «Կավկասի Սէլսկի Խազեաստվի» թերթիս 267 համարում յայտնուած էր Լ. Ե. Խան-Աղեանի հնարած նոր ինքնաշարժ գործիքի համար, որ առանց օժանդակ մեքենայի ինքն իրան ջուր է բարձրացնում վերև մինչև 42½ մետր. Յունիսի 17ին մենք տեսանք այդ մեքենան (N. 10) բանե-

digitised by A.R.A.R.@

լիս Աւչալայում, նա դրած էր քաղաքի ջրամբարի մօտ և **յիսնեակի** բանում էր, տալով միրհւում ջուր 10 սանտիմետր խողովակով – 6½ մետր բարձրութեան ջրվէժից, որը թափում էր 25 սանտիմետր խողովակով մէկ մետր բարձրութիւնից:

Խան-Ազեանի գործիքում պահպանուած է միայն գաղափարը առաջի հնարողի: Նա ունի **յառաջակ ձեւ, ամուր է, լաւ բանում է**, իսկ գինն էլ 2-3 անգամ պակաս է միւս ջուր բարձրացնող մեքենաներից:

Գ. Խան-Ազեանի գործիքում, բաց ի մէկ հասարակ խցանից և ամենահասարակ ձեւի ռէզինէ վենտիլներից ուրիշ բանող մասեր չկա: Սարքիլը ամենահասարակ կերպի է հարկաւոր է. միայն միացնել պտուտակներով մեքենան խողովակների հետ, կամ պտուտելով մացցնել խողովակները իրար մէջ:

«Կավկ. Սիլսկ. խազ». - N. 285.

Իսկ «Մշակ» լրագիրն էր վկայէ.

Ցուցահանդէսի զեղեցկութիւնից մէկն էր և պ. Լևոն Խան-ազեանի ջրաբաշխական «աֆտօ-էլեվատօրը»: Առանձին շնորհակալութեան արժանի է այդ պարոնը, որ ամենամեծ ուրախութեամբ յանձն առաւ հեռագրով բերել տալ Թիֆլիսից իր հնարած




Զ Բ

Նոյն գործիքը որ կը ցուցընէ ջրոյ բաշխման եղանակը:

մեքենան: Ցուցահանդէսի առաջին և երկրորդ օրը դրած էր ձորում, ի ցոյց ժողովրդի, և ինքն, պ. Խանազեան, ուրախութեամբ բացատրում էր ամենքին և իւրաքանչիւրին առանձին իր մեքենայի կազմակերպութիւնը: Աչքի էին ընկնում զանազան տեղերից եկած գիւղացիներ, զինւորական դասից և ցուցահանդէսի բոլոր անդամները: Ջրաբաշխական «աֆտօ-էլէվատօրը», իր հասարակ կազմութեամբ և ջուր բարձրացնելու կարողութեամբ զարմացնում էր ոչ միայն գիւղացիներին, այլ և կրթված դասին: Շատերը կարծում էին, թէ նրա բոլոր գաղտնիքը ծածկված է հեռաքրքրողի աչքից, բայց երբ մեքենայի հետ եկած արհեստաւորը ցոյց տուեց ամենը, տեսան որ նրանց կազմութիւնը նոյնքան հասարակ է, որքան և դրսի: Մեքենայի սարքելը տևեց մօտ 1½ ժամ: Ցուցահանդէսի անդամ Ս. Արովեանը խօսեց այդ մեքենայի մեծ նշանակութեան մասին ընդհանուր գիւղատնտեսութեան համար և յայտնեց կովկասեան կողմից շնորհակալութիւն հնարողին: Մանրամասնութիւններին մէջ չեմ մտնում մեքենայի մասին, մի քանի անգամ տպված է «Մշակում»: Այսքանը միայն կասեմ, որ ցուցահանդէսից յետոյ, մի քանի գիշեր մասնաւոր մարդիկ բանակցութիւն սկսեցին պ. Խանազեանի հետ՝ իրանց գիւղերում և կալուածներում այդ մեքենան դնելու մասին:

Ժամանակին «Բազմավէպ»ի ընթերցողաց ծանուցած էինք Գ. Լեւոն Խան-Ազեանցի այս գիւտը. բայց առոր վրայ մանրամասն յօդուած մը հրատարակուած չըլլալով, վրան որոշ գաղափար մը կարելի չէր ունենալ և հաղորդել. այժմ ներկայ յօդուածովս կ'իմանանք որ սա օգտակար գործի մ'է և ըստ կազմութեան գաղղիական բարձրացուցիչ սիփոնէն աւելի պարզ է: Կը մաղթենք հայ հեղինակին դեռ ուրիշ նոր օգտակար գիւտեր:

ԽՄԲ.

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄԻՍ

## 15 ԴԵԿՏԵՄԲԵՐ

### ԱՆԳՂԻԱ

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ մէջ Անգղիացիք հասուցին ի Թրանսվաալ 15,000 հոգի յօգնութիւն Գէօրգ Ուայթի: Պօէրներն այլ և այլ յարձակումներ ըրին, բայց միշտ չունեցան նոյն յաջողութիւնը.— և իրենց ունեցած նախկին յաջողութենէն օգուտ չքաղեցին, և Անգղիացիք օրըստօրէ շատցուցին զինուորները, իսկ Պօէրներն երբեմն ատրին, երբեմն անդին յարձակելով կորանցուցին իրենց ուղղութիւնը: Թրանսվաալի վերջին պաշտօնական ծանուցման համեմատ Փրեթօրիայի մէջ կան 1338 անգղիացի գերիներ, որոց 62 չեն զինուորականք:

Ուէսթվէրս Պուլլէր զանազան ծրագիրներ հաստատեց ապահով կերպով յաղթութիւնը ձեռք բերելու համար, բայց իրմէ աւելի Մէթուէն զանազան տեղեր յաղթեց Պօէրներուն և տիրեց Կրաս փանի բլրոց, և անկէ հալածեց 2500 Պօէրները, ձեռք ձգեց շատ ձիեր և վառօդ, թէպէտ և Անգղիացիք ալ բաւական կորուստ ու վնասներ ունեցան թէ՛ պատերազմներու և թէ զինուորաց փոխադրութեան մէջ: Այսպէս բաղդն երբեմն Պօէրները, երբեմն Անգղիացիները կը զօրացընէ:

Զամպէրլէնի ի Լէյչէսթըր խօսած քաղաքագիտական ճառը Եւրոպիոյ մէջ այլ և այլ ազ-

digitised by A.R.A.R.@